ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Եղեգնաձոր** **25/12/2020**

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12*
*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ*

*Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:*

*Բացակա էին՝ Արփաշ Այվազյանը, Նարինե Գրիգորյանը, Նեկտար Հովհաննիսյանը, Վալոդյա Սմբատյանը*

*Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝*
*Աշոտ Հարությունյան, Վարդան Ավագյան, Անի Առաքելյան*

*Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը*

*Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը*

*Լսեցին*
*25.12.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.*

*1. Հաստատել 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը.*

*1)2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
*2)2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
*3)2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ , ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
*4)2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
*5)2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ,,ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
*6)ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
*7)ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ*

ՄԱՍԻՆ
8)ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 12-րդ,14-րդ և 25-րդ հոդվածների պահանջներով.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2021 թվականին գործող տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ն/

Լսեցին
2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջներով.

1.Համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանել 400000 ՀՀ դրամ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին
2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ , ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և 34-րդ հոդվածի, ,, Համայնքային ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջներով.

1. Հաստատել Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի :
3. Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան շնորհելու դեպքում սահմանել հավելավճար՝ իրենց պաշտոնային դրույքաչափի 10 տոկոսի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին
2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ և ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 28-րդ կետի պահանջներով.

1.Հաստատել համայնքի ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելված 1,2,3,4,5,6 :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին
2021Թ-Ի ՀԱՄԱՐ,,ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 28-րդ կետի պահանջներով .

1.Հաստատել <<Եղեգնաձորի համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն N1 հավելվածի :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 25.01.2018թ. ,,Եղեգնաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին,, թիվ 04 որոշումը.

1. Համայնքային բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) ոլորտի բաժին 10 խումբ 7 դաս 1 այլ նպաստներ բյուջեից հոդվածից /հոդված 4729/ համայնքի կարիքավոր բնակիչներին հատկացնել օգնություն.

1. Հովհաննիսյան Մելանյա-10000 ՀՀ դրամ
2. Իսրայելյան Մետաքսյա-10000 ՀՀ դրամ
3. Սարգսյան Աղավնի-մերժել
4. Ֆրանգուլյան Մետաքսյա-մերժել
5. Պապոյան Աստղանուշ-10000 ՀՀ դրամ
6. Միքայելյան Անետա-10000 ՀՀ դրամ
7. Ղազարյան Աղավնիկ-10000 ՀՀ դրամ
8. Մարկոսյան Ռիմա-20000 ՀՀ դրամ
9. Հովհաննիսյան Ծովինար-15000 ՀՀ դրամ
10. Հակոբյան Մայրանուշ-10000 ՀՀ դրամ
11. Գալստյան Շողիկ-մերժել
12. Գևորգյան Սոֆիկ-10000 ՀՀ դրամ
13. Հայրապետյան Ալլա-30000 ՀՀ դրամ
14. Ոսկանյան Աստղիկ-15000 ՀՀ դրամ
15. Քոչարյան Անուշ-20000 ՀՀ դրամ
16. Հարությունյաան Արգինա-15000 ՀՀ դրամ
17. Դանիելյան Ինեսա-10000 ՀՀ դրամ
18. Մարգարյան Հասմիկ-15000 ՀՀ դրամ
19. Մարգարյան Աշխեն - 30000 ՀՀ դրամ
20. 2. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախում սանձազերծված պատերազմի հետևանքով վիրավորում ստացած, անհետ կորած բնակիչների ընտանիքներին՝ (Հուսիկ Ստեփանյան, Սիլվա Զաքարյան, Սամվել Գևորգյան, Լիանա Կարապետյան, Արթուր Զաքարյան) յուրաքանչյուրին 50.000 -ական ՀՀ դրամ :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 5-րդ կետի և « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2021թվականի բյուջեի նախագիծը.

ա/ եկամուտների գծով – 297180 հազար ՀՀ դրամ
բ/ ծախսային գծով - 297180 հազար ՀՀ դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ հավված 1
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ հավված 2
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հավված 3
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը / պակասուրդը/ հավված 4
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ հավված 5
7.Համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ հավված 6
8.Սահմանել,որ
ա/ծախսերի ֆինանսավորումը կատարվում է սպացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները
բ/ ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման նախատեսված հոդվածների միջև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները հոդվածների միջև չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը:

9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ն/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

Տալ համաձայնություն համայնքային բյուջեի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 ՀՀ համայնքի պահուստային ֆոնդ ոլորտի պահուստային միջոցներ հոդվածից / հոդված 4891/ 497,0 հազ. դրամ պակասեցնել ավելացնելով՝

1) 400,0 հազ ՀՀ դրամ բաժին 10 խումբ 7 դաս 1 սոցիալական հատուկ արտոնություններ / այլ դասերին չպատկանող/ ոլորտի այլ նպաստներ բյուջեից հոդվածին / հոդված 4729 / համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին և ս/թ սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում Արցախյան պատերազմում վիրավորված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու համար, ըստ ցուցակի:

2)97,0 հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 1 դաս 1 օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում ոլորտի տեղեկատվական ծառայություններ հոդվածին /հոդված 4234/ զորահավաքի կազմակերպման համար ծրարների և նամականիշների ձեռք բերման համար :

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ն/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱԿ ԱԼՈՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՌՈՍԿԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՍԱՔԱՆՅԱՆ

ՍՄԲԱՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ______________

Նիստն արձանագրեց՝ Անժելա Սարգսյանը ______________